ԱԼԻՔ
Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ
92-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 256 (24537), հատավաճառ՝ 20000 ռիալ
سال نودودوم - شماره (۲۴۵۳۷) ۲۵۶ - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ
11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023
دوشنبه – ۲۰ آذر ۱۴۰۲
E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir
آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی

Նախագահ Ռէյիսի.

# «ԱԶԳԵՐԻ ԶԱՐԹՕՆՔԸ ՄԻԱՆՇԱՆԱԿ ԿԸ ՓՈԽԻ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ»



«ԱԼԻՔ» - Կառավարութեան երէկ երեկոյեան կայացած նիստի ընթացքում, Հանրապետութեան նախագահ այաթ. Սէյէդ Էբրահիմ Ռէյիսին նշելով, որ ողջ աշխարհը հասկացել է միակողմանիութեանը վերջ տալու անհրաժեշտութիւնը, ասել է. «Ազգերի զարթօնքը միանշանակ հիմք կը հանդիսանայ աշխարհի պայմանները փոխելու համար՝ ազդարարելով միակողմանիութեան վերջը եւ արդար համակարգի հաստատումը՝ բազմակողմանիութեան հիմքի վրայ»:

Նախագահն իր խօսքերի մէկ այլ հատուածում քննադատել է Գազայում հրադադարի մասին բանաձեւի դէմ վետօ կիրառելու ԱՄՆ-ի որոշումը՝ նշելով, որ սա եւս մէկ ապացոյց է Գազայի ժողովրդի սպանդում Միացեալ Նահանգների անմիջական դերակատարութեան մասին:

# Ամիր Աբդօլլահեանը ԵՄ-ին կոչ է արել աւելի արդիւնաւէտ քայլեր ձեռնարկել Գազայում իրավիճակը կայունացնելու համար

«ԱԼԻՔ» - ԱԳ նախարար Հոսէյն Ամիր Աբդօլլահեանը Եւրոմիութեանը կոչ է արել աւելի արդիւնաւէտ քայլեր ձեռնարկել Գազայի հատուածում սիոնիստական ռեժիմի ռազմական գործողութիւնները կասեցնելու համար:

Ամիր Աբդօլլահեանը դեկտեմբերի 10-ին նամակ է յղել ԵՄ դիւանագիտութեան ղեկավար Ժոզէպ Բորէլին:

Իր նամակում Իրանի արտաքին գերատեսչութեան ղեկավարը շեշտել է եւրոպական կողմի վերջին դիրքորոշման կարեւորութիւնը հրադադարի անհրաժեշտութեան եւ այն տեւական դարձնելու փորձերի վերաբերեալ՝ դադարեցնելով խաղաղ բնակիչների սպանութիւնները Գազայում, յարգելով միջազգային մարդասիրական իրաւունքը եւ կենտրոնանալով Գազայի անօթեւան բնակիչներին անհրաժեշտ օգնութիւնը շտապ ուղարկելու վրայ:



Նա նաեւ ողջունել է Բորէլի դիրքորոշումը՝ իսրայէլցի վերաբնակների գործողութիւնները միջազգային մարդասիրական իրաւունքի կոպտագոյն խախտում յայտարարելու եւ Յորդանան գետի արեւմտեան ափին վերաբնակների բռնութիւնը դատապարտելու հարցում:

Եւրոմիութեան արտաքին քաղաքականութեան պատասխանատուին ուղղուած նամակում կոչ է արւում աւելի արդիւնաւէտ քայլեր ձեռնարկել Գազայի հատուածի վրայ սիոնիստական ռեժիմի յարձակումներն ընդմիշտ դադարեցնելու, շրջափակումը լիովին վերացնելու եւ Գազայի հատուածի բռնազաւթմանը վերջ տալու համար:

# Արցախի յանձնումը լոկ միջոց էր. իրականում սկսել է ՀՀ հայութեան օղլիացումը





Խունտան ամբողջ հռետորիկան ուժգնօրէն գործի է դրել մարդկանց համոզելու համար, որ իր Մեծ դաւաճանութիւնը՝ Արցախի յանձնումը, դա ճիշտ քայլ էր, որ դա իբր բխում է ՀՀ պետական շահերից, որ դա ինքը արել է Սերգոյի եւ Պօղոսի լաւ կեանքի համար:

Այդ հռետորիկան, բնականաբար, յիշեցնում է իր գաղափարական հօր 1997 թ. յայտնի յօդուածի՝ հետագայում քարուքանդ եղած թէզերը:

Եւ այս ամէնն արւում է ոչ թէ աւարտուած գործընթացին՝ Արցախի յանձնմանը, տալու իրաւական, քաղաքական ու գաղափարական հէնք, այլ դա արւում է հայ հասարակութեանը նախապատրաստելու սկսելիք գործընթացին:

(Շար. 8-րդ էջում)

# Մեր գերեվարուած լեռներն յիշելիս



«ԱԼԻՔ»- Դեկտեմբերի 11-ը՝ Լեռների միջազգային օրն է:

Լուսանկարում Գոմշասարն է, Արցախ աշխարհի Մռաւի լեռնաշղթայի բարձրագոյն լեռը (3724 մ.):

Մեծ Մասիսից (5165 մ.), Սիփանից (4434 մ.), Արագածից (4090 մ.), Փոքր Մասիսից (3925մ.) եւ Կապուտջուղից (3905 մ.) յետոյ, Գոմշասարը ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ 6-րդ բարձր գագաթն է:

Թէեւ գիտենք, որ ՀՀ գործող իշխանութիւններին այս փաստը բնաւ էլ դուր չի գայ, այդուհանդերձ՝ յիշեցման կարգով. Արարատը, Սիփանը, Մռաւը, Թոնդրակը, Նեմրութը... գտնւում են ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ, սակայն, հանգամանքների բերումով, ժամանակաւորապէս գերեվարուած են թշնամու կողմից:

ԿԱՐԾԻՔ

# Ներսփիւռքեան խօսոյթի խթանումը՝ որպէս թւային Սփիւռքի զարգացման գործօն

ՍԻՒՆԷ ՓԱՐՄԱՆԵԱՆ

Սփիւռքն այսօր ունի գոյատեւման լրջագոյն խնդիրներ: Արցախեան վերջին պատերազմը, Արցախի ժողովրդի նկատմամբ իրականացուած էթնիկ զտումները, բռնի տեղահանութիւնը, Սփիւռքին հոգեպէս քայքայեցին: Պատճառներից մէկն այն էր, որ սփիւռքահայն իր հայրենիքից հեռու լինելով, չունէր բաւարար չափի հնարաւորութիւններ աղէտի դէմն առնելու համար, թէեւ, հայրենիքում ապրող մեր հայրենակիցների հետ շփումների ժամանակ նրանց մօտ եւս կարելի էր նկատել նոյնպիսի իրավիճակ: Այսինքը, մեր հասարակութիւնը վերջին աղէտներին չկարողանալով ազդել ներքին իմաստով, կուտակել է անօգնականութեան զգացում, որը պայմանաւորուած չէ միայն Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիների աշխարհագրական դիրքով:



Միեւնոյն ժամանակ հարկաւոր է ընդգծել, որ Սփիւռքը Արցախի կորստից յետոյ կանգնած է վերափոխման ընտրութեան առջեւ եւ իր համար ճակատագրական այս պահերին կարեւոր է կատարի ընտրութիւն, պայքարե՞լ՝ ներազգային ամրութեան ձեռքբերման, իր գործառոյթը վերաիմաստաւորման ուղղութեամբ, թէ՞ մատնուել անգործութեան:

Պայքար, որը կենթադրի ոչ միայն արդիւնաւէտ աշխատանքի իրականացում, այլեւ՝ իւրաքանչիւր մարդ կարող է ունենալ առիթ եւ հնարաւորութիւն սեփական քայլով նպաստել համընդհանուր

(Շար. 8-րդ էջում)



Հայրենիքն այն է, որ չեն որոնում:
Հայրենիքն այն է, որ գտնուած է
ի սկզբանէ, ի ծնէ եւ միշտ,
ուրեմն նաեւ նա չի էլ կորչում:
Իսկ մերը... կորա՜ւ...
Եւ ընդմի՞շտ:
Օ, ո՛չ:

Հայրենիքն այն է, որ ոչ թէ կորչում,
այլ ընդամէնը յափշտակւում է,
ինչպէս որ ձեռքի ափը չի կորչում,
երբ նա փակւում է,
բայց եւ չի կարող միշտ մնալ փակուած,
ինչպէս հայրենին՝ միշտ յափշտակուած...

Պարոյր Սեւակ (1924-1971), հայ մեծանուն բանաստեղծ, գրականագէտ եւ թարգմանիչ, հայ արդի գրականութեան գագաթներից մէկը

ARAM®
coffee
ԱՐԱՄ
قهوه آرام սուրճ
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی–شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee

Վարդան Օսկանեան.

# «Խաղաղութեան պայմանագիրը մօտ է ստորագրման. այնտեղ ընդհանրապէս Արցախի մասին խօսք չկայ»



*Սեղանի վրայ այսօր կայ այսպէս կոչուած խաղաղութեան պայմանագիր, իմ տեղեկութիւններով բաւական առաջ է գնացել եւ մօտ է ստորագրման: Այս մասին իր «Ֆէյսբուք»-եան տեսաուղերձում ասել է ՀՀ Արտաքին գործերի նախկին նախարար Վարդան Օսկանեանը:*

*«Այդ փաստաթղթում նախկինում կար մի կէտ, եթէ չեմ սխալւում 9-րդ կէտը, որտեղ խօսւում էր Արցախի ժողովրդի իրաւունքների, անկախութեան հարցերի մասին, այդ կէտն այսօր հանուած է այդ պայմանագրից, գոյութիւն չունի, ընդհանրապէս Արցախի մասին խօսք չկայ եւ եթէ այս բովանդակութեամբ է ստորագրւում այդ պայմանագիրը, դրանով մենք փակում ենք Արցախի էջը: Պատահական չէ, որ Ադրբեջանի նախագահը վերջերս ասաց, որ հայերը պէտք է մոռանան Արցախի մասին: Ես կարծում եմ, որ դա անհնար պահանջ է, հայ ժողովուրդը երբեք չի կարող մոռանալ Արցախի մասին: Արցախի մոռացում նշանակում է մոռանալ մեր անցեալը, մեր պատմութիւնը մեր ողջ մշակութային ժառանգութիւնը: Արցախը մենք չենք կարող մոռանալ, որովհետեւ Արցախը հայկական հող է: Արցախը երբեք անկախ Ադրբեջանի կազմում չի եղել, նոյնիսկ սովետական շրջանում Արցախն ունեցել է ինքնավար կարգավիճակ, իսկ վերջին 30 տարիներին Արցախը եղել է փաստացի քաղաքական միաւոր: Պահանջել, որ հայ ժողովուրդը մոռանայ Արցախը, դա ուղղակի անհնար է»,- ասում է նա:*

*Օսկանեանը նշում է, որ խնդիրը կայանում է նրանում, որ ՀՀ իշխանութիւնները գնում են դրան եւ այս փաստաթղթի ստորագրումը այս բովանդակութեամբ մոռացութեան է տանում Արցախը:*

*«Ադրբեջանը պէտք է հասկանայ, որ այս պայմանագիրը նրանք ստորագրում են ոչ թէ Հայաստանի հետ, հայ ժողովրդի հետ, այլ Նիկոլ Փաշինեանի եւ նրա կառավարութեան հետ, հայ ժողովուրդը չի կարող մոռանալ Արցախը»,- ասում է Օսկանեանը եւ շեշտում, որ Արցախի ժողովրդի վերադարձն իրենց տներ պէտք է մաս կազմի այս պայմանագրին, եթէ իրօք այն խաղաղութեան պայմանագիր է:*

*ԱԳ նախկին նախարարի խօսքով՝ այսօր իշխանութիւնները ունեն այդ վերջին հնարաւորութիւնը՝ Արցախի հարցը ներառեն այս պայմանագրի մէջ:*

*«Դա հայ ժողովրդի, Արցախի ժողովրդի նւազագոյն իրաւունքն է եւ դրա տէրն ու տիրականը պէտք է լինի ՀՀ կառավարութիւնը: ՀՀ կառավարութիւնը պարտաւոր է այսօր այդ հարցին տէր կանգնել եւ միակ պայմանը այս կէտի ներառումն է, 9-րդ կէտը պէտք է վերադարձնել պայմանագրի մէջ, որ Արցախի ժողովուրդը միջազգային երաշխիքներով պէտք է վերադառնայ: Այ դա իսկապէս կարող է ինչ-որ առումով խաղաղութիւն բերել մեր երկու ժողովուրդներին»,- ասում է նա:*

*Օսկանեանը ինչպէս նախկինում, այս անգամ եւս առաջարկեց աշխատել իշխանութիւնների հետ այդ հարցն օրակարգ բերելու համար՝ նշելով, որ պարզապէս կամք եւ ցանկութիւն է պէտք, այլ ոչ թէ իշխանութիւնը պահելու նեղ հաշւարկներ:*

# Կորուած սուվերենութեան ժամանակներում յիշել են՝ մարդու իրաւունքների պաշտպանութեան միջազգային օրն է

*ՀՅԴ Հայաստանի ԳՄ անդամ, ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Լիլիթ Գալստեանը գրում է.*

*«Կորուած սուվերենութեան, պետական ինստիտուտների տոտալ կազմաքանդման, քաղբանտարկեալների, ոստիկանական բռնութիւնների ու ամենաթողութեան, դատական համակարգը ռեժիմի լծորդ դարձնելու, օրէնքների վրայ թքած ունենալով բոլոր մակարդակներում իշխանութիւնը լկտիաբար զաւթելու, ազգային-պետական շահերի ուրացման, բարոյական արժէքների ու կարմիր գծերի ոչնչացման, ներազգային աներեւակայելի պառակտման ու արժէքային դեգրադացման, հազարաւոր հայրենազուրկ հայրենակիցների, Արցախի դաւաճանութեան, վախի ու տոտալ ապատիայի մեր ժամանակներում մէկ էլ յիշել, որ այսօր Դեկտեմբերի 10-ն է, ՄԱԿ-ի կողմից յայտարարուած մարդու իրաւունքների պաշտպանութեան միջազգային օրը:*

*Ու չդադարող մեղադրանք-ռեֆլեքս՝ անցեալն է մեղաւոր... Ու տօնածառ, ու էլի խոշտանգւող Հրապարակ... Ցինիկ է եւ ունայն ամենայն բան... Ես մեզ չեմ ճանաչում... Բաբելոնի աշտարակ դառնալու ճանապարհին ենք: Մարդու իրաւունք բառն իսկ ուղեղի մրմռոց է առաջացնում, ու լռութիւն, միջազգային լռութիւն...»,- գրել է պատգամաւորը:*



**24News**

# Որ Արցախի լուծարման փաստը անխուսափելի էր, ինչո՞ւ էիր գոռում՝ Արցախը Հայաստան է եւ վերջ



*ՀՀԿ խօսնակ Էդուարդ Շարմազանովը գրում է.*

*«Այ փորձանք, բա որ 2018-ին հասկացել ես Արցախի լուծարման փաստի անխուսափելիութիւնը. ինչո՞ւ էիր 2019-ին Ստեփանակերտում գոռում՝ Արցախը Հայաստան է եւ վերջ:*

*Ինչո՞ւ էիր 2018-ին յայտարարում, որ Արցախի անկախութեան միջազգային ճանաչումն անխուսափելի է:*

*Ինչո՞ւ 2019-ին մերժեցիր համանախագահների «5 պլիւս 2» տարբերակով խնդրի լուծումը:*

*Ինչո՞ւ էիր նոյն Շուշիում 2020-ին հպարտօրէն մասնակցում Արայիկ Յարութիւնեանի երդմնակալութեանը:*

*Ինչո՞ւ 5 հազար լոյսի նման տղէրքի վարի տուեցիր:*

*Ինչո՞ւ մերժեցիր 2020-ի հոկտեմբերի 19-ին Պուտինի պատերազմ դադարեցնելու առաջարկը:*

*Ինչո՞ւ էիր 2020-ի նոյեմբերի 25-ին յայտարարում, որ մեր ճանապարհը Արցախի անկախութեան ճանաչման միջազգայնացումն է՝ Ֆրանսիայի Սենատի ճանաչման ակտի օրինակով:*

*Ինչո՞ւ 2021-ի ընտրութիւններին հռչակեցիր «անջատում՝ յանուն փրկութեան» թէզը:*

*Այս ամենին կայ մէկ տրամաբանական բացատրութիւն. Փաշինեանը փաստացի հայ ազգի թշնամին է ու այս ամէնն արել է պայմանաւորուած:*

*Եթէ այլ բացատրութիւն կա՞յ՝ ասէք»,- գրել է Շարմազանովը:*

**«ԱԼԻՔ» - Յիշեցնենք, որ նախօրէին Նիկոլ Փաշինեանը յայտարարել էր, որ Արցախի Հանրապետութեան լուծարումն անխուսափելի էր:**

**Է. Շարմազանովը ակնարկել է նրա այս յայտարարութեանը:**

**24News**

***Թէոդիւանագիտութեան հարթակ.***

Ռուսաստանի հարցերով փորձագէտ Շուէյբ Բահմանը «Ֆարհիխթեգան»-ի հետ զրոյցում.

# «Անվտանգային բարդ իրավիճակը դեռ շարունակւելու է Կովկասում»




*«ԱԼԻՔ» - Տարածաշրջանում սպասւող զարգացումները հասկանալի պատճառներով կապւած են ռուսուկրաինական եւ պաղեստինաիսրայէլեան... *

*«ԱԼԻՔ» - Տարածաշրջանում սպասւող զարգացումները հասկանալի պատճառներով կապւած են ռուսուկրաինական եւ պաղեստինաիսրայէլեան հակամարտութիւնների արդիւնքների հետ: Մի կողմից միջանցքների ձեւաւորման ճանապարհային քարտէզը, թելադրող հիմնական խաղացողներից երկուսին՝ Մոսկւային եւ Թել Աւիւին մաշեցնող պատերազմների մէջ ներքաշման խնդիրը, միւս կողմից ճանապարհին յայտնւած փոքր ու մեծ պետութիւնների հետ հաշւի նստելչնստելու խոչընդոտը, գալիս են յուշելու, որ բնական դաշնակիցների հետ յարաբերութիւնների հարցում երկիրը շրջադարձային փոփոխութիւնների տանելը կարող է ճակատագրական աւարտի բերել ամէն ինչ:*

*Սրան յաւելենք կովկասեան տարածաշրջանը երկու բլոկի վերածող միջանցքների՝ «Հիւսիս-հարաւ»-ի եւ «Թրանս Խազար»-ի (ՆԱՏՕ-ի թուրանական միջանցքի) վրայ յայտնւած եւ նոր պատերազմ տեսած պետութիւններում արտահերթ ընտրութիւնների անցկացման հարցի միաժամանակ առաջ քաշումն ու քննարկումները, որով ոչ միայն փորձ է արւելու սպասւող իրադարձութիւնների ամբողջ պատասխանատւութիւնը բարդել ընտրող ժողովուրդների վրայ, այլեւ՝ միջազգային հանրութեան աչքին եւ սառը պատերազմի այս փուլում ընդգծել հակառուսական տրամադրութիւնների բարձրացման փաստը:*

*Իրանական մեդիադաշտի հոտառութիւնը եւս նկատել է ձեւաւորումների այդ տեսակի վտանգները, որի հետ կապւած են համարում Իրանի նախագահի Մոսկւա կատարած այցի կարեւորութիւնը:*

*«Ֆարհիխթեգան» օրաթերթին տւած հարցազրոյցում, դոկտ. Շուէյբ Բահմանը փորձել է իրեն ուղղւած հարցերի շրջանակում նկարագրել իրավիճակն ու հնարաւոր ելքերը:*

*Թերթը գրել է, որ նշւած ուղեւորութեան ընթացքում քննարկւած ամենակարեւոր հարցերը ուսումնասիրելու համար հարցազրոյցի էր հրաւիրել ռուսական հարցերով փորձագէտ, «Ժամանակակից աշխարհի ուսումնասիրութիւնների ինստիտուտ»-ի տնօրէն Շուէյբ Բահմանին:*

*Փորձագէտը Ամիր Աբդոլլահեանի Մոսկւա կատարած այցի արդիւնքում ստորագրւած փաստաթղթին անդրադառնալով նշել է, որ այն կոչւում է պատժամիջոցների դէմ պայքարի փաստաթուղթ, ինչը երկու երկրներին առիթ է տալու քայլեր ձեռնարկել այն չէզոքացնելու եւ բանկային յարաբերութիւնների ու կապերի անխոչընդոտ իրականացման շուրջ, որի արդիւնքում կողմերը բարելաւելու են տնտեսական փոխանակումները եւ փոխգործակցութիւնները բոլոր ոլորտներում:*

*«Այս փաստաթուղթը կարող է յարմար հիմք հանդիսանալ երկու երկրների դէմ ԱՄՆ-ի սահմանած միակողմանի պատժամիջոցների դէմ համագործակցութեան համար»,- արձանագրել է փորձագէտը:*

*Իսկ թէ Կովկասում առկայ իրավիճակն ու խնդիրները նկատի ունենալով այդ փաստաթուղթը ինչ է ենթադրում իրենից, փորձագէտը պատասխանել է. «Տնտեսութեան հետ կապւած հնարաւորութիւններն ու զարգացումները ամենամեծ խթանն են կարող հանդիսանալ բոլոր կողմերի հարցում: Թեհրանն ու Մոսկւան վերջին տարիներին զգալիօրէն խորացրել են փոխգործակցութիւնները եւ Կովկասում տնտեսական շահաւէտ հեռանկարներով ծրագրեր են իրականացրել»:*

*Փորձագէտը յաւելել է, որ ԵԱՏՄ-ում Ռուսաստանի դիրքորոշման շնորհիւ Իրանին յաջողւեց արտօնեալ պայմանագիր կնքել միութեան հետ մաքսային սահմանափակումների վերացման հարցում: Դա պատճառ է դարձել, որ վերջին երեք տարիներին իրանական արտադրութեամբ աւելի քան 500 ապրանքատեսակ արտահանւի ԵԱՏՄ երկրներ, ինչը նաեւ գնային առումով շահաւէտ է այդ երկրների համար:*

*Շուէյբ Բահմանը Գազայի պատերազմի եւ ռուս-ուկրաինական հակամարտութեան հետ կապւած նշել է, որ այս երկու ամիսների ընթացքում, երբ Իսրայէլի յանցագործութիւնները պաղեստինցիների դէմ լարւած վիճակի անցան, Իրանը դիւանագիտական լուրջ ջանքեր գործադրեց պատերազմը դադարեցնելու կամ ռազմական եւ դաշտային գործընթացների վրայ ազդելու եւ յարձակումների թափը նւազեցնելու համար: «Միւս կողմից, Ռուսաստանը լայնածաւալ ջանքեր գործադրեց պատերազմի առաջին իսկ օրւանից նւազեցնելու հակամարտութեան կրակի բոցը: Մոսկւան նոյնիսկ ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդում բանաձեւ առաջարկելով փորձեց դադարեցնել պատերազմն ու կանխել դրա շարունակութիւնը»,-նշել է փորձագէտը յիշեցնելով, որ իրավիճակի կայունացումն այսօր Արեւմուտքին*

(Շար. 7-րդ էջում)

«Ոսկանապատ».

# «Փաշինեան-Ալիեւ համատեղ յայտարարութեան մառախուղի էֆեկտը»



«Ոսկանապատ» վերլուծական կենտրոնը ծաւալուն հրապարակմամբ անդրադարձել է Հայաստանի Հանրապետութեան վարչապետի աշխատակազմի եւ Ադրբեջանի Հանրապետութեան նախագահի վարչակազմի համատեղ յայտարարութեանը.

«Դեկտեմբերի 7-ի երեկոյեան Հայաստանի կառավարութիւնը տարածեց լուրը՝ Ադրբեջանն ազատ է արձակում 32 հայ գերիների, Հայաստանը՝ Սիւնիք ներխուժած 2 ադրբեջանցիներին:

Այս անսպասելի կամ չափազանց երկար սպասուած լուրը ստեղծեց դրական ֆոն՝ յայտարարութեան ամբողջ տեքստի բովանդակութեան համար, բայց իրականութիւնն այն է, որ Փաշինեան-Ալիեւ համատեղ յայտարարութիւնը պարունակում է ռիսկեր Հայաստանի անվտանգութեան համար:

### Տեքստի բովանդակութիւնը եւ իրականութիւնը. Մաս 1

Եւ այսպէս, Փաշինեանի աշխատակազմի եւ Ալիեւի վարչակազմի համատեղ յայտարարութեան տեքստի առաջին պարբերութեան մէջ նշուած է. «Հայաստանի Հանրապետութիւնը եւ Ադրբեջանի Հանրապետութիւնը համակարծիք են, որ տարածաշրջանում վաղուց սպասուած խաղաղութեան հասնելու պատմական հնարաւորութիւն կայ»:

Նախ՝ «Խաղաղութեան հասնելու պատմական հնարաւորութիւն» ձեւակերպման հեղինակն ու գլխաւոր սպառողը Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանն է՝ դրանից բխող կեղծիքով: Երկրորդ՝ այդ կեղծիքի հիմքում երկու օր առաջ սահմանին սպանուած հայ զինուորն է, դրանից առաջ մէկ օրում՝ սեպտեմբերի 19-ին սպանուած 200-ից աւելի հայերը, դրանից առաջ՝ սեպտեմբերեան յարձակումը եւ Հայաստանի տարածքում 200-ից աւելի հայերի սպանութիւնը, դրանից առաջ…

Եղածն առայժմ հայերին սպանելու պատմական հնարաւորութիւն է:

Փաշինեանի աշխատակազմի եւ Ալիեւի վարչակազմի համատեղ յայտարարութեան տեքստի առաջին պարբերութեան մէջ նաեւ նըշուած է. «Երկու պետութիւնները վերահաստատում են ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան սկզբունքների յարգման հիման վրայ յարաբերութիւնները կարգաւորելու եւ խաղաղութեան պայմանագրի կնքմանը հասնելու իրենց մտադրութիւնը»:

Նախ՝ երկու շաբաթ առաջ՝ նոյեմբերի 24-ին, քաղաքացիների հարցերին պատասխանելով Նիկոլ Փաշինեանը յայտարարեց. «Չնայած Ադրբեջանի կողմից հնչել է յայտարարութիւն, որ ճանաչում է Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը, բայց այստեղ կոնկրետութիւններ են պէտք, թէ ինչ նկատի ունենք, ինչ նկատի ունեն իրե՛նք Հայաստանի տարածքային ամբողջականութիւն ասելով»:

Հետեւաբար, Հայաստանի այդ ի՞նչ եւ ո՞ր տարածքային ամբողջականութեան մասին է խօսքը, որն Ալիեւը վերահաստատել է, թէ յարգում է:

Երկրորդ՝ Հայաստանի ինքնիշխանութիւնը յարգելու վերահաստատման մէջ ինչպէ՞ս է տեղաւորւում մէկ օր առաջ Ալիեւի հնչեցրած այս յայտարարութիւնը. «Ադրբեջանից Նախիջեւան պէտք է հեշտ մուտք լինի: Ինչպէս արդէն ասել եմ Փաշինեանին, սա Ադրբեջանից Ադրբեջան անցում է լինելու, հետեւաբար, չպէտք է լինեն մաքսազերծում, ստուգումներ, սահմանապահների ընթացակարգեր»:

### Տեքստի բովանդակութիւնը եւ իրականութիւնը. Մաս 2

Փաշինեանի աշխատակազմի եւ Ալիեւի վարչակազմի համատեղ յայտարարութեան տեքստի երրորդ եւ չորրորդ պարբերութիւնները գերիների մասին են. «Առաջնորդուելով մարդասիրութեան արժէքներով, եւ որպէս բարի կամքի դրսեւորում, Ադրբեջանի Հանրապետութիւնն ազատ է արձակում 32 հայ զինծառայողների:

Հայաստանի Հանրապետութիւնն իր հերթին, առաջնորդուելով մարդասիրութեան արժէքներով, եւ որպէս բարի կամքի դրսեւորում, ազատ է արձակում 2 ադրբեջանցի զինծառայողների»:

Սա գլխաւոր պարբերութիւնն է: Որը Փաշինեանին անհրաժեշտ էր, քանի որ գերիները, որ պէտք է մի քանի ամիս Բաքւի բանտերում սպասելու համար ներէին, այնտեղ էին արդէն երեք տարի: Ինչն աււլիսների, հարց ու պատասխանների ժամանակ արդէն սկսել էին յիշեցնել Փաշինեանին:

Միջազգային իրաւունքի մասնագէտ Սիրանոյշ Սահակեանի տուեալով՝ մինչեւ այս փոխանակումը Բաքւում պահւող հայ գերիների պաշտօնական թիւը 55 էր: Նրանցից բացի յայտնի է, որ Ադրբեջանը գերեվարել է առնուազն 80 հայի եւս, որոնց ճակատագրերը պարզելու ուղղութեամբ որեւէ քայլ չի իրականացւում:

Իրականում՝ գերիների փոխանակումն Ալիեւի ստանձնած պարտաւորութիւնն էր դեռ նոյեմբերի 9-ի յայտարարութեամբ: Այն նոյն յայտարարութեամբ, որը մշտապէս առաջ բերելով պահանջում է միջանցք Հայաստանի տարածքով:

Հիմա Ալիեւին այսպիսի քայլը պէտք էր՝ համոզելու, թէ ուղիղ բանակցութիւններով հնարաւոր է արդիւնքի հասնել, ինչն էլ բացատրելու գործին անմիջապէս նետուեցին Բաքւի քարոզչահարթակները: Առաջին հերթին, իհարկէ, նշելով, որ ազատ արձակուած գերիների թւում չեն Արցախի նախագահները, Ռուբէն Վարդանեանը, այն հայերը որոնց դատավարութիւնները վերածում են կրկէսի:

### Ուղիղ բանակցութիւնների պահանջը բաւարարուած է

Հայաստանի հետ ուղիղ բանակցելու Ալիեւի պահանջն ունի թուրքական ծագում: Փաշինեան-Էրդողան կարգաւորման գործընթացը կանգ է առել, յատուկ ներկայացուցիչները չեն հանդիպում այն պահից, երբ թուրքական կողմը հրապարակային կերպով պահանջեց հանդիպել Հայաստանի կամ Թուրքիայի տարածքում, ինչը նշանակում էր լուսանցքում թողնել միջնորդներին:

Ուղիղ բանակցութիւնները դրական ու ողջունելի են, բայց ոչ այսօրւայ Հայաստանի պարագայում, եւ ոչ այն բացայայտ իրականութեան հետ, որ երկրորդ կողմը Թուրքիայի արբանեակն է: Նիկոլ Փաշինեանին դիտաւորութեամբ քաշում են ուղիղ բանակցութիւնների ծուղակը ճնշում գործադրելու, առանց վկաների եւ ազդեցիկ դիմադրութեան նոր զիջումներ պարտադրելու, պարտաւորութիւն չստանձնելու կամ ստանձնած պարտաւորութիւններից խուսափելու միտումով:

### Չեն յանձնւում միջնորդները

Փաշինեան-Ալիեւ յայտարարութիւնից մի քանի ժամ առաջ յայտնի դարձաւ, որ դեկտեմբերի 11-ին Բրիւսէլում սպասւում է ԵՄ Արեւելեան գործընկերութեան ԱԳ նախարարների համաժողովը, ինչը նշանակում է, որ միաժամանակ Բրիւսէլում են լինելու Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարները: Առանձին հանդիպման մասին յայտարարութիւն դեռ չկայ:

Եւրոխորհրդի նախագահ Շառլ Միշէլն առաջին եւ դեռեւս միակ միջնորդն է, որը ողջունել է Փաշինեան-Ալիեւ յայտարարութիւնը՝ այն անուանելով «մեծ առաջընթաց»: «Կողմերի միջեւ երկխօսութեան հաստատումն ու խորացումը եղել է ԵՄ գլխաւորած բրիւսէլեան գործընթացի գլխաւոր նպատակը: Այսօրւայ առաջընթացն առանցքային քայլ է»,- նշել է Միշէլը՝ յաւելելով, որ այժմ խրախուսում է Հայաստանի ու Ադրբեջանի առաջնորդներին շուտափոյթ աւարտին հասցնել խաղաղութեան պայմանագրի կնքումը:

Փաշինեան-Ալիեւ յայտարարութիւնից րոպէներ անց ՀՀ ԱԳ նախարարութիւնը տարածեց յայտարարութիւն Արարատ Միրզոյեանի եւ ԱՄՆ Կովկասեան բանակցութիւնների հարցերով աւագ խորհրդական, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Լուիս Բոնոյի հանդիպման մասին: Հայկական կողմը դրական է արձագանգել ԱՄՆ պետքարտուղար Բլինքէնի՝ Վաշինգտոնում Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարների հանդիպման առաջարկին:

Բաքու այցից յետոյ ԱՄՆ պետքարտուղարի օգնականն էր յայտնել, որ պետքարտուղար Բլինքէնն ակնկալում է շուտով Վաշինգտոնում հիւրընկալել Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարներին:

Ստացւում է՝ մի կողմից համաձայնել ուղիղ բանակցութիւնների, միւս կողմից՝ մեկնել Բրիւսէլ ու Վաշինգտոն եւ հրաժարուել Մոսկւայի առաջարկով հանդիպումից: Բանակցային գործընթաց, որը թափթփուած է, անհաւասար, տորթից կտոր պոկելու բոլորի փորձերով, եւ վերջնարդիւնքով, որը ոչինչ չի երաշխաւորի: Առաւել եւս խաղաղութիւն եւ անվտանգութիւն»:

**Panorama.am**

# Բացառում ենք Արցախի քաղաքացիների վերադարձը Ադրբեջանի իրաւազօրութեան ներքոյ

## Արցախի քաղաքական եւ քաղաքացիական ուժերի ուղերձը



Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետութեան աւելի քան 120 կուսակցութիւններ, հասարակական կազմակերպութիւններ, լրատուամիջոցներ ու համայնքների ղեկավարներ ստորագրել են ուղերձ՝ ուղղուած միջազգային հանրութեանը՝ դեկտեմբերի 10-ի՝ ԱՀ անկախութեան հանրաքուէի, ԱՀ Սահմանադրութեան եւ Մարդու իրաւունքների միջազգային օրերի առթիւ:

Ուղերձի հասցէատէրերն են՝ ՄԱԿ Գլխաւոր քարտուղարը, ՄԱԿ Անվտանգութեան խորհուրդը, ԵԱՀԿ գործող նախագահը, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ղեկավարները, Եւրոխորհուրդը (Գլխաւոր քարտուղարը, ԵԽԽՎ նախագահը, Նախարարների խորհրդի նախագահը), Եւրոմիութեան խորհրդի նախագահը, Եւրոպական Խորհրդարանի նախագահը, ԱՊՀ Գլխաւոր քարտուղարը, ՀԱՊԿ Գլխաւոր քարտուղարը, ՆԱՏՕ Գլխաւոր քարտուղարը:

Ուղերձը բաց է հետագայ ստորագրութեան համար, որին կարող են միանալ Արցախի կուսակցութիւնները, հասարակական կազմակերպութիւնները, լրատուամիջոցները եւ համայնքների ղեկավարները: Միանալու ցանկութիւն ունեցող սուբիեկտները պէտք է համապատասխան նամակ ուղարկեն հետեւեալ էլ-հասցէին՝ Artsakh.December10@gmail.com

Արցախի Հանրապետութեան քաղաքական եւ քաղաքացիական ուժերի ուղերձում ասւում է.

### «ԱՐՑԱԽԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՈՒՂԵՐՁԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹԵԱՆԸ

Հասցէատէրեր՝ ՄԱԿ Գլխաւոր քարտուղար, ՄԱԿ Անվտանգութեան խորհուրդ, ԵԱՀԿ գործող նախագահ, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրներ, Եւրոխորհուրդ (Գլխաւոր քարտուղար, ԵԽԽՎ նախագահ, Նախարարների խորհրդի նախագահ), Եւրոմիութիւն խորհուրդի նախագահ, Եւրոպական Խորհրդարանի նախագահ, ԱՊՀ Գըլխաւոր քարտուղար, ՀԱՊԿ Գլխաւոր քարտուղար, ՆԱՏՕ Գլխաւոր քարտուղար:

Ոչ մի ազատ ժողովուրդ չի կարող հրաժարուել իր ինքնիշխան իրաւունքներից եւ ենթարկուել իր համար օտար պետութեան գերիշխանութեանը, առաւել եւս մի պետութեան, որը ղեկավարւում է իր անպատժելիութեամբ արբեցած աւտորիտար, կոռումպացուած եւ ռասիստական ռեժիմի կողմից:

Մեր ընդհանուր որոշումը՝ լքել մեր Հայրենիքը՝ Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետութիւնը, մեր տները, թողնել Սբ. Մկրտչի մասունքները, մեր հայկական եկեղեցիներն ու մեր նախնիների գերեզմանները, որոնք մենք պաշտպանել ենք դարեր ի վեր, ապացոյց է ողջ աշխարհին, որ Արցախի ժողովրդի համար ազատութիւնը բարձրագոյն արժէք է: Այս ճարահատ որոշումն ընդունուել է շարունակական ցեղասպանական գործողութիւնների եւ մեր գլխին կախուած գոյաբանական լուրջ սպառնալիքների պայմաններում:

Մենք կայացրինք այդպիսի որոշում, քանի որ նրանք, ովքեր իրենց համարում են մարդու իրաւունքների ու ազատութիւնների ջատագովներ ու պաշտպաններ, որոշեցին յանուն Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ թւացեալ խաղաղութեան ձեռքբերման եւ յանուն իրենց աշխարհաքաղաքական շահերի մերժել սեփական հայրենիքում արժանապատիւ ապրելու եւ ինքնորոշման մեր իրաւունքները:

Մենք հեռացանք, քանի որ միայն այդպէս կարող էինք ապահովել մեր անվտանգութիւնը եւ պահպանել մեր մարդկային ու ազգային արժանապատուութիւնն ու մեր գենաֆոնդը, քանի որ միայն այդպէս կարող էինք բացայայտել այն մեծ սուտը, որի վրայ հիմնուած էր հակամարտութեան միակողմանի եւ ուժային լուծման քաղաքական գաղափարը, որը ենթադրում էր մեզ եւ մեր երեխաներին ստիպել հպատակուելու եւ հաւատարմութեան երդում տալու մեզ ոչնչացնող եւ ատող վարչակարգին:

Աւելի քան երեք տասնամեակ շարունակ մենք մեր բոլոր ուժերով պաշտպանել ենք մեր երեխաների խաղաղութեան եւ ազատ զարգացման իրաւունքը: Մենք դիմակայում էինք քաղաքական գործարքներին, որոնցով մերժւում էր սեփական Հայրենիքում ապրելու մեր ինքնիշխան իրաւունքը, որը ձեռք է բերուել բազմաթիւ մարդկանց կեանքի գնով, յանուն մեր ազգային արժանապատուութեան ու ինքնութեան պահպանման՝ մի քանի սերունդների դարաւոր պայքարի ընթացքում ահռելի կորուստների գնով: Եւ այս պայքարը չի աւարտուել: Մենք վստահ ենք, որ ճշմարտութեան եւ արդարութեան զօրութեամբ կը վերադարձնենք մեր Հայրենիքը:

Նրանց համար, ովքեր կարծում են, թէ աշխարհը կարելի է կառավարել ստով ու բռնութեամբ, կրկընում ենք.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը խորհրդարանական ճանապարհով հռչակուել է 1991 թուականի սեպտեմբերի 2-ին՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի եւ Ադրբեջանական ԽՍՀ Շահումեանի շրջանի օրինական իշխանութիւնների կողմից, այն բանից

**(Շար. 6-րդ էջում)**

# Դիարբեքր




***Նիլայ Քիւչիւք***

***Դիարբեքրը՝ Հարաւարեւելեան Անատոլիայի (Արեւմտեան Հայաստան – խմբ.՝ «Ակունք») խոշորագոյն քաղաքներից մէկը, իր պատմա-մշակութային կառուցւածքով ուշագրաւ վայր է: Պատմական պարիսպներով շրջապատւած քաղաքն ունի հարուստ ժառանգութիւն, որը պարունակում է բազմաթիւ քաղաքակրթութիւնների հետքեր:***

### ԴԻԱՐԲԵՔՐԻ ԱՄՐՈՑԸ

*Դիարբեքրի մեր շրջագայութիւնը սկսում ենք պատմական պարիսպներից: Դիարբեքրի ամրոցը բաղկացած է երկու մասից՝ Ներքին ամրոց եւ Արտաքին ամրոց: Արտաքին պարիսպներն ունեն 82 աշտարակ, իսկ ներքինը՝ 19: Դիարբեքր քաղաքի պարիսպներն ունեն չորս հիմնական դարպասներ: Պարիսպները հիւսիսում բացւում են Լեռան դարպասով, արեւմուտքում՝ Ուրֆայի դարպասով, հարաւում՝ Մարդինի դարպասով, իսկ արեւելքում՝ Նոր դարպասով:*

### ԻՆՉ ԿԱՐԵԼԻ Է ԱՆԵԼ ԴԻԱՐԲԵՔՐԻ ՍՈՒՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

*Դիարբեքրի ամրոցից յետոյ բացայայտում ենք Սուրիչին (թրք.՝ պարըսպի ներս): Մեր առաջին կանգառը Ուլու մզկիթն է: Ք. Յ. 639 թ. մահմեդականների կողմից Դիարբեքրի գրաւմամբ Մար Թոմա եկեղեցին՝ քաղաքի ամենամեծ եկեղեցին, վերածւեց Ուլու մզկիթի: Մեծ բակ ունեցող մզկիթը Դիարբեքրի կարեւորագոյն վայրերից է: Հասան փաշա խանը գտնւում է Ուլու մզկիթի հէնց կողքին: Այս խանը, որը կառուցել է Վեզիրզադէ Հասան փաշան 1573 թ., այսօր կազմւած է նախաճաշ մատուցող ռեստորաններից: Եռայարկ խանի բակում կայ սիւնազարդ եւ գմբէթարդ շատրւան: Այս խանում նկարահանւել են 2012 թ. թողարկւած «Սուլթան» հեռուստասերիալի որոշ տեսարաններ:*

### ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻ ՔԱՂԱՔԸ

*Դիարբեքրի նեղ փողոցներով շարժուելիս հասնում ենք «Ջահիթ Սըթքը Թարանջը» թանգարան: 1733 թ. կառուցւած այս տունը, որտեղ ծնւել եւ մանկութիւնն է անցկացրել Ջահիթ Սըթքի Թարանջըն, կրում է Դիարբեքրի աւանդական բնակելի ճարտարապետութեան բոլոր առանձնայատկութիւնները: Թանգարանը ներկայում փակ է վերանորոգման պատճառով: Այդ պատճառով անմիջապէս անցնում ենք մեր միւս կանգառը՝ Ահմեթ Արիֆի գրականութեան թանգարան: Այս տունը, ինչպէս եւ իր հարեւան «Ջահիթ Սըթքը Թարանջը» թանգարանը, Դիարբեքրի աւանդական տների լաւագոյն նմուշներից է: Վեց սենեակ ու բակ ունեցող թանգարանում ցուցադրւած են բանաստեղծի անձնական իրերը, ձեռագիր բանաստեղծութիւններն ու լուսանկարները: Մենք չշեղւելով գրական մթնոլորտից՝ շարժւում ենք դէպի Ջիեա Գեօքալփի (յայտնի երիտթուրք, պանթուրքիստական գաղափարախօսութեան տեսաբաններից մէկը-«Ակունք»-ի խմբ.) թանգարան: Այս տունը, որտեղ 1876 թ. ծնւել է Զիյա Գեօքալփը՝ 1956 թ. վերածւել է թանգարանի: Այստեղ կարելի է տեսնել նաեւ Դիարբեքրի տներում առկայ աւազանով սրահի օրինակ: 1956 թ. այն վերածւել է թանգարանի եւ այցելուների համար բացւել են հեղինակի անձնական իրերի եւ փաստաթղթերի հաւաքածուն:*

### ՓՐՓՈՒՐՈՎ ՍՈՒՐՃ՝ ՍՈՒԼՈՒՔԼՈՒ ԽԱՆՈՒՄ

*Սուլուքլու խանը կառուցել է 1683 թ. Հանիլիօղլու Մահմութ Չելեբիի եւ նրա քրոջ՝ Աթիկէ Խաթունի կողմից: Այս խանը վերականգնւել եւ շահագործման է յանձնւել 2010 թ., եւ Դիարբեքրի ամենասիրւած վայրերից է: Այստեղ կարող էք խմել սուրճ կամ գինի: Մենք նախընտրեցինք թուրքական սուրճ (խօսքը արեւելեան սուրճի մասին է- «Ակունք»-ի խմբ.) խմել, քանի որ գինու համար այլ հասցէ ունէինք:*

*Սուլուքլու խանից դուրս գալուց յետոյ ճաշում ենք: Մեր ընտրութիւնը, իհարկէ, լեարդն է:*

### ԵՆԻՔԱՓԸ ՊՈՂՈՏԱՅ

*Դիարբեքրի տեղական այլ համադամ ուտեստներ ճաշակելուց յետոյ շարունակում ենք քայլել Սուրիչիում: Մեր հասցէն՝ Չորստանի մինարէն է: Շէյխ Մութահար մզկիթի կողքին գըտնըւող այս մինարէն շատ առումներով է ակնառու: Միակտոր քարէ սիւների վրայ կառուցւած չորսանկիւնանի այս մինարէն Անատոլիայում քառոտանի մինարէի միակ օրինակն է: Մինարէ այցելելիս հնարաւոր է տեսնել բազմաթիւ մարդկանց, ովքեր անցուդարձ են անում դրա տակով: Որովհետեւ ասում են որ այս մինարէի տակով 7 անգամ անցնողի ցանկութիւնը կատարւում է:*

*Չորստանի մինարէի մէկ այլ նշանակութիւնն այն է, որ այստեղ է սպանւել Դիարբեքրի Փաստաբանների միութեան նախկին նախագահ Թահիր Էլչին: Էլչին հրազէնային կրակոցներից սպանւել է այն բանից յետոյ, երբ նա մամուլում դատապարտող յայտարարութիւն էր արել՝ դատապարտելով 2015 թ. Հենդեքի գործողութիւնների ժամանակ վնասւած մինարէի դիմաց տեղի ունեցած միջադէպը:*

*Ենիքափը պողոտան, որը փակւել էր 2015 թ. Հենդեքի դէպքերի պատճառով, վերականգնողական աշխատանքներից յետոյ, վերաբացւել է 2022 թւականին: Լիւքս դասի բրենդների փողոցի վրայ երկու կարեւոր շէնք էլ կայ: Դրանք են Մար Փեթիւն քաղդեական եւ Սուրբ Կիրակոս հայկական եկեղեցիները: Ենթադրւում է, որ Մար Փեթիւն եկեղեցում, որը մինչ օրս օգտագործւում է կաթոլիկ քաղդէացիների կողմից, առաջին պաշտամունքը կատարւել է 498 թւականին: Հէնց նրա կողքին գտնւող Սուրբ Կիրակոս հայկական եկեղեցին հիացնում է իր պարտէզով եւ ճարտարապետութեամբ: Սուրբ Կիրակոս եկեղեցին Մերձաւոր Արեւելքի ամենամեծ հայկական եկեղեցին է:*

*https://www.cumhuriyet.com.tr/yazarlar/nilay-kucuk/diyarbakir-2146759*

**Թարգմանեց**
**Տիգրան Չանդոյեանը**
**Akunq.net**

# Օրհնութեան գրեր՝ Դադիվանքի վերջին հերթափոխի սպասաւորներին



*2020 թ. պատերազմից յետոյ Դադիվանքի վանական համալիրում ծառայելը դարձել էր մի կողմից փորձութիւն, միւս կողմից՝ երազանք: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանները ծառայութեան էին կոչւում Դադիվանք եւ հերթափոխով պահպանում աղօթական կեանքը առաքելական շրջանի սրբավայրում:*

*Արցախի թեմի կայքից տեղեկանում ենք, որ մինչեւ 2023 թ. սեպտեմբերին Արցախի Հանրապետութեան շուրջ ստեղծւած իրավիճակը Դադիվանքի վերջին հերթափոխի սպասաւորներ դարձան կամաւորաբար ծառայութեան անցած հոգեշնորհ Տ. Դերենիկ աբեղայ Սահակեանը եւ բարեշնորհ սարկաւագներ Արսէն Մարտիրոսեանն ու Յովհաննէս Էլինեանը: Հայր Դերենիկի ծառայութեան ժամկէտը վաղուց էր լրացել, սակայն հաշւի առնելով, որ վերջին շրջանում Դադիվանքը գտնւում էր կրկնակի շրջափակման մէջ՝ երկարեցին ծառայութեան երանելի ամիսները: Հայր Սուրբն ու սարկաւագները մեծ ոգեւորութեամբ ու հրճւանքով են յիշում հինաւուրց հայկական վանքում անցկացրած օրերի մասին:*

*Դեկտեմբերի 5-ին, Արցախի թեմի առաջնորդ Տ. Վրթանէս եպիսկոպոս Աբրահամեանն օրհնութեան գրեր է շնորհել Դադիվանքի սպասաւորներին՝ ի գնահատանք բարեխիղճ եւ նւիրեալ ծառայութեան: Վրթանէս Սրբազանն իր հայրական օրհնութիւնն ու խորին երախտագիտութիւնն է յայտնել հոգեւորականներին՝ անձւէր սպասաւորութեան համար:*

**Panorama.am**

# Խորհրդակցական հանդիպում՝ Թեհրանի 6-րդ շրջանի քաղաքապետարանում



*Դեկտեմբերի 6-ի երեկոյեան, Թեմական խորհրդի ատենապետ ճրտպ. Նորայր Արամեանը մասնակցել է Թեհրանի 6-րդ շրջանի քաղաքապետ՝ Սէյէդ Մորթեզա Ռոհանիի հրաւէրով, շրջանի քաղաքապետարանի ժողովասրահում կազմակերպւած խորհրդակցական հանդիպմանը, որտեղ նաեւ ներկայ են եղել պատկան շրջանի մշակութային կենտրոնների պատասխանատուները:*

*Հանդիպման հիմնական առանցքում են եղել քաղաքացիներին առաւել բարենպաստ ծառայութիւններ մատուցելու հնարաւորութիւնների ուղղութեամբ խորհրդակցելու եւ անհրաժեշտ համադրումները կատարելու օրակարգերը:*

*Խորհրդակցութեան ընթացքում ընդհանուր բացատրութիւն ներկայացնելով մատնանշւել են առկայ դժւարութիւնները եւ ընդգծւել են աշխատանքներում ժողովրդի մասնակցութեան կարեւորութիւնը: Այս ուղղութեամբ Նորայր Արամեանը նաեւ իր հերթին անդրադառնալով հայ համայնքին, որպէս Իրանի ժողովրդի մի մասնիկը կարեւորել է փոխհամագործակցութեան անհրաժեշտութիւնը:*

*Հանդիպման աւարտին աշխատանքների արդիւնաւորման համար որոշւել է հինգ յանձնաժողով կեանքի կոչել, որին նաեւ մասնակից կը լինեն հայ համայնքի ներկայացուցիչները:*

**Ազգային առաջնորդարանի**
**Հանրային կապի գրասենեակ**

# Այցելութիւն՝ ազգային առաջնորդարան







*Դեկտեմբերի 6-ին, Ռուս Ուղղափառ եկեղեցու հոգեւոր հովիւ եւ եկեղեցու հաղորդակցութեան բաժնի տնօրէն՝ Դանիալ Գրիգորի Մաստոսաֆը, որը հիւրաբար գտնւում է Ղոմի Ալմոստաֆա համալսարանում, պատկան պատասխանատուների ընկերակցութեամբ այցելել է Ս. Սարգիս եկեղեցի եւ ազգային առաջնորդարան: Պատւիրակութեանը դիմաւորել են Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսեանի հրաւէրով Թեհրանում գտնւող՝ Տ. Վիգէն վրդ. Տալգըրճեանը, Իրանի Իսլ. խորհրդարանում իրանահայութեան զոյգ պատգամաւորներ՝ Ռոբերտ Բեգլարեանը եւ Արա Շահվերդեանը, Թեմական խորհրդի ատենապետ ճրտպ. Նորայր Արամեանը, Կրօնական խորհրդի ատենապետ Տ. Մաշտոց քհնյ. Խաչատրեանը, ատենադպիրներ՝ Տ. Գրիգորիս քհնյ. Ներսիսեանցը, Տ. Արիստակէս քհնյ. Շահմիրեանը եւ ազգային առաջնորդարանի դիւանապետ՝ Զօրիկ Կարապետեանը:*

*Պատւիրակութիւնը նախ մուտք է գործել Ս. Սարգիս եկեղեցի, որտեղ Տ. Գրիգորիս քհնյ. Ներսիսեանցի միջոցով բացատրութիւն է ներկայացւել եկեղեցու պատմականի մասին եւ ապա ազգային առաջնորդարանի դահլիճում կայացած հանդիպմանը, Նորայր Արամեանը Սրբազան Հօր ողջոյնները փոխանցելով բարի գալուստ է մաղթել յարգոյ հիւրերին: Նա ամփոփ կէտերով անդրադարձել է իրանահայ երեք թեմերում, համայնքների եկեղեցական ու ազգային կեանքին նաեւ կառոյցի ընդհանուր դրւածքին ու գործունէութեանը: Հանդիպման ընթացքում նաեւ մատնանշւել է, Իրանում զանազան կրօնների հետեւորդների խաղաղ համակեցութիւնը, փոխադարձ կապերին եւ կրօնների խաղաղ երկխօսութեանը ու յարաբերութիւններին:*

*Ռուս Ուղղափառ եկեղեցու հոգեւոր հովիւը իր շնորհակալութիւնն եւ գոհունակութիւնն է յայտնել ջերմ ընդունելութեան եւ ազգային առաջնորդարան այցելելու առիթն ստեղծելու համար:*

*Այցի աւարտին յարգոյ հիւրին է յանձնւել Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Ս.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի գրչին պատկանող «Հայոց եկեղեցին» գիրքը:*

**Ազգային առաջնորդարանի**
**Հանրային կապի գրասենեակ**







# ՀՕՄ-ի «Արցախի ընտանիքներու դրամահաւաք»-ը կը շարունակուի

Ինչպէս որ տեղեակ էք արդէն, վերջին ամիսներուն հայ ազգը կը դիմագրաւէ հսկայական մարտահրաւէրներ Արցախի հայաթափման հետեւանքով: Այլ միութիւններու եւ կազմակերպութիւններու համագործակցութեամբ, Հայ Օգնութեան միութիւնը Կանադայի մէջ եւս գործի լծուեցաւ իր միջոցներով ձեռք երկարելու Արցախի բռնագաղթի ենթարկուած ընտանիքներուն օգնութեան ծրագրին:

Այսպէս, համականադական բնոյթով ստեղծուած Միացեալ մարմինը, 26 հոկտեմբերի 2023-ին, գումարեց իր առաջին ժողովը, լայնածաւալ հանգանակային արշաւ մը կազմակերպելու նպատակով: Սոյն Միացեալ մարմինին մաս կազմեցին շուրջ 27 ներկայացուցիչներ եւ աշխատանքը համակարգելու համար նշանակուեցան զոյգ ատենապետներ՝ Օնտարիօ եւ Քեբեկ նահանգներու իբրեւ ներկայացուցիչներ:

Վերոյիշեալ անդրանիկ ժողովին որոշուեցաւ ենթայանձնախումբ մը յառաջացնել առցանց աճուրդ մը կազմակերպելու նպատակով: Իրարայաջորդ հինգ շաբաթներու ընթացքին, նորակազմ ենթայանձնախումբի անդամներու ժրաջան աշխատանքին եւ անխոնջ ճիգերուն շնորհիւ կարելի եղաւ 338 արժէքաւոր նուէրներ ապահովել ընկեր-ընկերուհիներու, բարեկամներու, ծանօթներու եւ արուեստագէտներու աջակցութեամբ:

Կիրակի, 3 դեկտեմբերի, 2023-ին, առաւօտեան ժամը 8:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 10:00 տեղի ունեցաւ սպասուած աճուրդը:

Ուրախ ենք յայտարարելու, որ հակառակ տիրող սղաճին եւ տնտեսական դժուար պայմաններուն, աճուրդը հասաւ իր նպատակին: Մինչեւ առցանց աճուրդի փակումը «ծախուած» ապրանքներու թիւը հասած էր աւելի քան 240-ի: Միեւնոյն ատեն կը կատարուէին նիւթական նուիրատուութիւններ: Այդ օրը ընդհանուր առմամբ կարողացանք հանգանակել $41,950: Առ ի գիտութիւն բոլորիդ, յայտնենք, որ մինչեւ օրս Հայաստան ուղարկած ենք $80,000 ԱՄՆ դոլար:

Այս առթիւ յատուկ շնորհակալութիւն կուզենք յայտնել բոլոր նուիրատուներուն եւ մեր բոլոր աջակիցներուն: Այսօրուան դրութեամբ մեր մօտ եղած գումարը հասած է շուրջ $270,000:

«Արցախի ընտանիքներու դրամահաւաք»-ը սեպտեմբերի 23-էն ի վեր սկսած է եւ տակաւին կը շարունակուի: Մեր թիրախն է կէս միլիոնի հասնող գումար մը ապահովել տեղահան ընտանիքներուն հոգերը մասամբ մը թեթեւցնելու համար:

Ինչպէս գիտենք, Կաղանդը կը մօտենայ: Չմոռնաք, որ անոր իմաստը՝ նուիրելու մէջ կը կայանայ:

Ուստի, ՀՕՄ-ի Կանադայի Շրջանային վարչութիւնը դարձեալ կոչ կ'ուղղէ այն հայրենակիցներուն, որոնք տակաւին նուիրատուութիւններ չեն կատարած եւ կը խնդրէ իրենցմէ նիւթական աջակցութիւն բերել Արցախի ընտանիքներուն:

Նիւթական օժանդակութիւնը կարելի է ուղարկել.-

1) Վճարագրով՝ ARS Foundation-ին, հետեւեալ հասցէին՝

Armenian Relief Society of Canada,

3401 Olivar Asselin, Montreal, QC H4J 1L5

2) Այցելելով ՀՕՄ-ի Կանադայի Շրջանի կայքէջը՝ https://ars-canada.ca/

սեղմելով Donate Now կոճակը, ապա ընտրելով Aid to Artsakh fund-ը՝

3) Ե-փոխանցումով (E-transfer), ՀՕՄ-ի Շրջ. վարչութեան է-նամակի հասցէին՝ ars-canada@bellnet.ca

Բոլոր պարագաներուն կը խնդրենք նշել, թէ դուք ձեր նուիրատուութիւնները կը կատարէք Արցախի ընտանիքներու օժանդակութեան (Artsakh fund), որուն դիմաց պիտի ստանաք տուրքէ զերծ ստացագիր:

Առաջիկայ ամիսներուն Կանադայի տարածքին հանգանակուած բոլոր գումարները ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան միջոցաւ պիտի յանձնուին ՀՕՄ-ի Հայաստանի միաւորին:

**ՀՕՄ-ի Կանադայի Շրջանային վարչութիւն**
**4 դեկտեմբերի, 2023**

**Arfd.am**

# Հայ Օգնութեան միութիւնը կրկնակի թափով կը շարունակէ բռնի տեղահանուած արցախահայութեան օժանդակութեան ծրագրերը

Արցախի ազատագրական պայքարի առաջին օրերէն իսկ, ՀՕՄ-ը իր աշխարհասփիւռ միաւորներով ընդմիշտ եղած է Արցախի եւ արցախահայութեան կողքին, ան Արցախի մէջ հիմնած է մանկապարտէզներ եւ իրականացուցած է բազմաթիւ բարեսիրական ծրագիրներ: Բնականաբար, այս տագնապալի օրերուն եւս ՀՕՄ-ը իր օգնութեան ձեռքը կրկին պիտի մեկնէր արցախահայութեան:

19 սեպտեմբերի 2023-ին՝ ի տես եւ ի լուր արցախահայութեան դիմագրաւած արհաւիրքներուն, ՀՕՄ-ի բոլո՛ր միաւորները անմիջապէս գործի անցան եւ, ինչպէս միշտ, շուտով արձագանգեցին Արցախի կանչին՝ նիւթապէս ու բարոյապէս սատար հանդիսանալու մեր հայրենակիցներուն:

Արցախահայութեան շտապ օժանդակութեան յատկացումներով կատարուեցան հետեւեալ աշխատանքները:





**Առաջին փուլ**

Այս փուլին բաժնուեցան աւելի քան 1500 սննդեղէնի եւ մաքրութեան իրերու արկղեր՝ հետեւեալ պատկերով.-

• 440 արկղեր տրամադրուեցան Արցախի ներկայացուցչութեան՝ Աւստրալիոյ ՀՕՄ-ի եւ գաղութի հանգանակած գումարով:

• Աւելի քան հարիւր արկղեր փոխադրուեցան Գորիս եւ բաժնուեցան այնտեղ հանգրուանած արցախահայութեան:

• Համագործակցութեամբ շրջանի ուղեկից կազմակերպութիւններուն (ՀՄԸՄ, ՀԵՄ, Համազգային, ՀՅԴ), ինչպէս նաեւ զանազան երկիրներէ հայրենիք ժամանած կամաւոր հայորդիներու օգնութեամբ, ՀՕՄ-ի հովանաւորութեամբ Արամ Մանուկեան կեդրոնին մէջ աւելի քան հազար (1000) արկղ սննդեղէն ու մաքրութեան իրեր պատրաստուեցան եւ բաժնուեցան Հայաստանի զանազան մարզերու մէջ հաստատուած (Երեւան, Արագածոտն, Արարատ, Արմաւիր, Շիրակ, Գեղարքունիք, Լոռի, Տաւուշ, Սիւնիք, Կոտայք, Վայոց Ձոր) Արցախէն բռնի տեղահանուած ընտանիքներու:

Անձնազոհ բարերարներու նուիրատուութեամբ ձեռք բերուած ուտեստեղէն, հագուստներ, անկողնային եւ խոհանոցային իրեր տրամադրուեցան ՀՕՄ-ի կեդրոն դիմած բռնի տեղահանուած արցախահայութեան:

**Երկրորդ փուլ**

Երկար շաբաթներու արձանագրութիւններէ եւ պատրաստութիւններէ ետք, 18 նոյեմբերի 2023-ին, ՀՕՄ-ը թափ տուաւ բարեսիրական աշխատանքի 2-րդ փուլին եւ բռնի տեղահանուած արցախահայութեան տրամադրեց սննդեղէն եւ մաքրութեան անհրաժեշտ իրեր, որոնք կը բաժնուին ՀՕՄ-ի եւ ՀԵՄ-ի ժրաջան անդամներուն միջոցով:





Բարեսիրական այս աշխատանքին 20000 տոննա մակարոնով իր մասնակցութիւնը բերաւ նաեւ «Մենք ենք մեր Սարերը» բարեգործական հասարակական կազմակերպութիւնը:

Ցարդ ՀՕՄ-ը բաժնած է 7000 արկղ (ամէն մէկ արկղ կը պարունակէ 100 ամերիկեան դոլար արժողութեամբ սննդեղէն եւ մաքրութեան իրեր) այսպիսով աւելի քան 30,000 հայորդիներ օգտուած են ՀՕՄ-ի սոյն ծրագիրէն:

Հայ Օգնութեան միութիւնը պիտի շարունակէ անաչառ եւ հետեւողական զօրակցութիւն ցուցաբերել արցախահայութեան՝ որդեգրելով այլ երկարաժամկէտ ու մնայուն ծրագրեր:













# Երուսաղէմի հայ համայնքը պատմութեան մէջ առաջին անգամ համախմբել է հայկական բոլոր ուժերին՝ մէկ դրօշի ներքոյ



*Երուսաղէմի հայկական թաղամասի պաշտպանութեան եւ պահպանման շարժումը (SavetheArQ) պատմական է որակել Երուսաղէմի Լատինական Պատրիարք Նորին Գերազանց Կարդինալ Պիերբատիստա Պիցցաբալլայի հետ հանդիպումը:*

*Ըստ SavetheArQ-ին իր X-ի միկրոբլոգում գրել է, որ դեկտեմբերի 5-ին շարժման, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն կուսակցութեան (ՀՅԴ), Ռամկավար ազատական կուսակցութեան (ՌԱԿ), Երուսաղէմի Հայկական Բարեգործական միութեան (AGBU), Հայ Օգնութեան միութեան (ՀՕՄ), ՀԵՄ ակումբի եւ ՀՄԸՄ ակումբի անդամները հանդիպել են լատինական Երուսաղէմի պատրիարք Գերաշնորհ Կարդինալ Պիերբատիստա Պիցաբալլայի հետ:*

*«Երուսաղէմի հայ համայնքի պատմութեան մէջ առաջին անգամ այս աննախադէպ հանդիպումը համախմբեց հայկական բոլոր խմբակցութիւններին մէկ դրօշի ներքոյ՝ մէկ անգամ եւս ընդգծելու այս կենսական ժամանակներում Երուսաղէմի քրիստոնեայ համայնքների միջեւ համերաշխութեան եւ միասնութեան կարեւորութիւնը:*

*Պատրիարքը ընդունեց Նորին Սրբութիւն Հռոմի Պապ Ֆրանցիսկոսի համար գրուած նամակը, որտեղ խնդրում էր Նորին Գերաշնորհին օգտագործել իր բարոյական հեղինակութիւնն ու ազդեցութիւնը՝ կասեցնելու «Կովերի պարտէզ»-ի անօրինական վարձակալութեան հետ կապուած հայկական թաղամաս ներխուժումը, պահպանելու Սուրբ Երկրի քրիստոնէական ինքնութիւնը՝ շեշտը դնելով հայկական եւ քրիստոնէական բլոկների տարածքային ամբողջականութեան պաշտպանութեան վրայ:*

*Ի նշան երախտագիտութեան՝ Լատինական Պատրիարքին շնորհաւորել են կարդինալի կոչում շնորհելու կապակցութեամբ եւ նուիրել հայկական աւանդական խեցեղէն»:*

**Arfd.am**

# Այն ամէնը, ինչ հայկական է, կը մնայ հայկական

## Նուրհան արքեպիսկոպոսն այցելել է «Կովերի պարտէզ»



*Երուսաղէմի Հայոց պատրիարք Նուրհան արքեպիսկոպոս Մանուկեանն այցելել է հին քաղաքի հայկական թաղամասի «Կովերի պարտէզ»-ի պատնէշուած հատուածը եւ իր աջակցութիւնը յայտնել թաղամասը փրկելու շարժման ակտիւիստներին: Այս մասին X-ի իր միկրոբլոգում յայտնել է շարժումը: Եկեղեցու բոլոր անդամներն իրենց աջակցութիւնն են յայտնել պատրիարքին՝ «Կովերի այգու» հետ կապուած անօրինական գործարքը չեղարկելու համար:*

*«Այն ամէնը, ինչ հայկական է, կը մնայ հայկական»,- վստահեցրել է նա:*

*Մանուկեանը ակտիւիստների հետ քննարկել է նաեւ քաղաքի հայ համայնքի պահպանման հետագայ քայլերը:*

*Յիշեցնենք, որ Նուրհան արքեպիսկոպոս Մանուկեանն անձամբ է ստորագրել «Կովերի պարտէզ»-ի տարածքն 99 տարով գործարար Դենիէլ Ռուբինշտէյնին վարձակալութեան յանձնելու մասին պայմանագիրը, որտեղ նա պէտք է հիւրանոց կառուցի:*

*Այս գործարքին, սակայն, դէմ էր Երուսաղէմում Հայ համայնքը, եւ պարբերաբար բողոքի ակցիաներ է անցկացնում այնտեղ:*

**168.am**

## Բացառում ենք ...

(Շար. 3-րդ էջից)

*յետոյ, երբ Ադրբեջանի իշխանութիւնները յայտարարեցին ԽՍՀՄ-ից դուրս գալու որոշման մասին: ԼՂՀ-ի ձեւաւորման մասին քաղաքական հռչակագիրը հիմնուած էր այն ժամանակ գործող միութենական օրէնքի իրաւական նորմի եւ արցախցիների կամարտայայտութեան վրայ, որը դրսեւորուել է համաժողովրդական հանրաքուէով:*

*Մեր ինքնորոշման իրաւունքը ճանաչուել է նոյնիսկ Խորհրդային Ռուսաստանի եւ Ադրբեջանի իշխանութիւնների կողմից 1920 թուականին, հիմք է հանդիսացել 1923 թուականին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ձեւաւորման համար, ամրագրուել է ԽՍՀՄ սահմանադրութեամբ, Ադրբեջանական ԽՍՀ սահմանադրութեամբ եւ «ԼՂԻՄ-ի մասին» Ադր. ԽՍՀ օրէնքով, այն պահպանուել է «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետութեան դուրս գալու հետ կապուած հարցերի լուծման կարգի մասին» 1990 թ. ապրիլի 3-ի դաշնային օրէնքով, ինչպէս նաեւ խարսխուած է ՄԱԿ-ի կանոնադրութեան եւ 1966 թ. ընդունուած Քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքների մասին միջազգային դաշնագրի վրայ:*

*1991 թուականի դեկտեմբերի 10-ի հանրաքուէն հաստատեց, որ ընտրողների բացարձակ մեծամասնութիւնը պաշտպանել է մեր Հանրապետութեան անկախութիւնը հռչակելու որոշումը: Ցեղասպանական պաշարման եւ ռազմական ագրեսիայի պայմաններում ժողովրդավարական չափորոշիչներով ընտրուած օրինական խորհրդարանը 1992 թուականի յունուարի 6-ին ընդունել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Անկախութեան հռչակագիրը: Այս ընտրութեան համար իրենց կեանքով վճարեցին մեր հազարաւոր հայրենակիցները:*

*1992 թուականին ԵԱՀԽ/ԵԱՀԿ բոլոր անդամ - պետութիւնները ճանաչեցին Լեռնային Ղարաբաղի ընտրուած ներկայացուցիչների իրաւունքը՝ մասնակցելու ԵԱՀԿ միջազգային համաժողովին, որը լիազօրուած է կարգաւորելու ղարաբաղեան հակամարտութիւնը:*

*Մեր ժողովուրդը 2006 թուականին հանրաքուէով հաստատել է Հանրապետութեան Սահմանադրութիւնը, որով սահմանուել է Լեռնային Ղարաբաղի օրինական ներկայացուցիչների ընտրութեան կարգը եւ նրանց լիազօրութիւնները, իսկ 2017 թուականի հանրաքուէով ժողովուրդը հաստատել է նոր Սահմանադրութիւնը: Այս Սահմանադրութիւնը եղել եւ մնում է միակ հիմնարար օրէնքը, որով առաջնորդւում եւ որին ենթարկւում են մեր Հանրապետութեան քաղաքացիներն իրենց կամքով:*

*Հետեւաբար, մենք՝ Արցախի Հանրապետութեան քաղաքացիներս, ձգտելով պաշտպանել մեր օրինական իրաւունքներն ու մեր Հանրապետութեան սուբիեկտութիւնը, պնդում ենք, որ ինքնորոշուած Լեռնային Ղարաբաղը ոչ մի մասնակցութիւն չի ունեցել ինքնահռչակ Ադրբեջանի Հանրապետութեան սահմանադրութեան եւ իշխանութեան մարմինների ձեւաւորման գործում, այլ, ընդհակառակը, յայտարարել է սեփական անկախութեան մասին: Սակայն նորաստեղծ Ադրբեջանը չէր թաքցնում Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իր անհիմն յաւակնութիւնները:*

*Հէնց այսպիսի պայմաններում է միջազգային հանրութիւնն արձանագրել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի շուրջ տարաձայնութիւնների առկայութեան փաստը՝ ճանաչելով տուեալ տարածքի վիճելիութիւնը: Հայաստանն ու Ադրբեջանն այն ժամանակ ԵԱՀԽ/ԵԱՀԿ անդամ-պետութիւններ են դարձել պայմանով, որ ընդունում են Լեռնային Ղարաբաղի պատկանելութեան հարցում տարաձայնութիւնների առկայութեան փաստը եւ համաձայնում են, որ Լեռնային Ղարաբաղի ապագայ կարգավիճակը որոշւի ԵԱՀԽ/ԵԱՀԿ հովանու ներքոյ անցկացուելիք խաղաղութեան համաժողովում: Երկու պետութիւններն էլ հիմնախնդիրը բացառապէս խաղաղ ճանապարհով լուծելու միջազգային պարտաւորութիւն են ստանձնել:*

*Սակայն, ԵԱՀԽ/ԵԱՀԿ անդամ դառնալով՝ Ադրբեջանն անմիջապէս խախտեց վէճերը խաղաղ ճանապարհով լուծելու իր միջազգային պարտաւորութիւնը: Պաշտօնական Բաքուն ապօրինի ուժ կիրառեց ԼՂՀ-ի՝ որպէս վիճելի տարածքի նկատմամբ, նպատակ ունենալով խոչընդոտել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշմանը նուիրուած միջազգային համաժողովի անցկացումը: Ստեղծուած իրավիճակում Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն օգտուել է ինքնապաշտպանութեան իր իրաւունքից: 1992-94 թթ. Ադրբեջանի ձեռնարկած ագրեսիան պարտութեամբ պսակւեց այդ երկրի համար ու յանգեցրեց տարածքային զգալի կորուստների: Կարեւոր է ընդգծել, որ ԼՂՀ-ի ու Ադրբեջանի զօրքերի շփման գիծը միջազգայնօրէն ճանաչուել է:*

*Այդուհանդերձ, հակամարտութեան երեք տասնամեակի ընթացքում ոչ մի պետական գործիչ, քաղաքական գործիչ կամ իրաւական իշխանութեան որեւէ միջազգային մարմին չի պատասխանել մի պարզ հարցի. ինչո՞ւ Ադրբեջանը եւ այլ պետութիւններ, որոնք իրաւական առումով ճանաչել են օրէնքի գերակայութեան սկզբունքին հետեւելու պարտաւորութիւնը՝ որպէս իրենց պետականութեան հիմնարար սկզբունք, կարող են չկատարել այս սկզբունքից բխող՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրաւունքը յարգելու պարտաւորութիւնը եւ ուժի չկիրառման սկզբունքը:*

*Սոյն հանգամանքն Ադրբեջանին թոյլ է տուել սեփական քաղաքականութեան զինանոցում պահպանել բնիկ հայ ժողովրդի բռնի տեղահանման ճանապարհով Լեռնային Ղարաբաղի զաւթման ռազմավարութիւնը: Այդ երկրի նախայարձակ քաղաքականութիւնն այդպէս էլ միջազգային պատշաճ դատապարտման չի արժանացել: Միջազգային ակտորները, ի հեճուկս բնակչութիւնը ցեղասպանութիւնից պաշտպանելու համար պատասխանատւութիւն ստանձնելու իրենց միջազգային պարտաւորութիւնների (Responsibility to Protect), ցաւօք, պատշաճ ուշադրութիւն չդարձրին Արցախի բնակչութեան լրջագոյն գոյաբանական սպառնալիքների մասին Արցախի խորհրդարանի 2023 թ. յուլիսի 27-ի ուղերձին եւ չկանխեցին Ադրբեջանի յանցաւոր գործողութիւնները, ինչի արդիւնքում Ադրբեջանը 2023 թ. սեպտեմբերին հերթական ռազմական ագրեսիան ձեռնարկեց ԼՂՀ-ի դէմ եւ Արցախի բնիկ հայ ազգաբնակչութեանն արտաքսեց իր պատմական հայրենիքից:*

*Հարկ է յիշեցնել, որ 2020 թ. նոյեմբերի 9-ի զինադադարի կնքումից յետոյ Ադրբեջանի նախագահը յայտարարել էր, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրն այլեւս գոյութիւն չունի, եւ որ բոլորը պէտք է համակերպուեն Երկրորդ ղարաբաղեան պատերազմի արդիւնքներին: Զգտելով նենգափոխել հակամարտութեան էութիւնը՝ Ադրբեջանն իր դիւանագիտական բառապաշարի մէջ մտցրեց «Հայաստանի կողմից ադրբեջանական հողերի զաւթման» մասին կեղծ պատումը, որի միջոցով էլ փորձում է խլացնել իր իսկ ագրեսիւ ցեղասպանական քաղաքականութեան արձագանգները:*

*Մենք մտադիր չենք փոխելու սեփական Հայրենիքի նկատմամբ մեր սկզբունքները, համոզմունքներն ու իրաւունքները՝ ո՛չ ուժի, ո՛չ բնաջնջման սպառնալիքի, ո՛չ աքսորի, ո՛չ էլ որեւէ այլ քաղաքական հանգամանքներում:*

*Ամբողջ քաղաքակիրթ աշխարհն այսօր կանգնած է ընտրութեան առաջ՝ կամ վերականգնել միջազգային կարգը Լեռնային Ղարաբաղում, հիմնուած ինքնորոշման իրաւունքի եւ ժողովուրդների ու մարդու այլ իրաւունքների ու ազատութիւնների վրայ, կամ լռելեայն համաձայնել, որ շրջափակումը, ռազմական ագրեսիան, ցեղասպանութիւնը եւ օկուպացիան հակամարտութիւնների լուծման օրինական միջոցներ են հանդիսանում:*

*Այսօր բազմաթիւ երկրների առաջնորդներ խօսում են Լեռնային Ղարաբաղ հայերի վերադարձի անհրաժեշտութեան մասին: Սակայն, մենք գտնում ենք, որ սեփական Հայրենիք մեր ժողովրդի խաղաղ, անվտանգ եւ արժանապատիւ վերադարձի ու կեանքի համար անհրաժեշտ են հետեւեալ անվիճարկելի պայմանները.*

*Առաջին՝ մենք բացառում ենք Արցախի Հանրապետութեան քաղաքացիների վերադարձը Ադրբեջանի իրաւազօրութեան ներքոյ: Ադրբեջանական զինուած ուժերը, ոստիկանութիւնը եւ վարչակազմը պէտք է ամբողջութեամբ դուրս բերուեն Արցախի Հանրապետութեան տարածքից, ներառեալ Շահումեանի շրջանը, որտեղ 1992 թ. իրականացուած էթնիկ զտման համար Ադրբեջանը լիակատար պատասխանատուութիւն է կրում:*

*Երկրորդ՝ Արցախի Հանրապետութեան ողջ սահմանի երկայնքով պէտք է տեղաբաշխուեն ՄԱԿ-ի միջազգային բազմազգ խաղաղապահ ուժեր, եւ ստեղծւի ապառազմականացուած գօտի:*

*Երրորդ՝ Լաչինի միջանցքը պէտք է փոխանցւի ՄԱԿ-ի վերահսկողութեանն ու կառավարմանը:*

*Չորրորդ՝ Արցախի Հանրապետութեան տարածքը պէտք է փոխանցւի ՄԱԿ-ի կառավարմանը՝ բոլոր փախստականների վերադարձի, ժողովրդավարական եւ իրաւական հաստատութիւնների ստեղծման եւ տնտեսութեան վերականգնման համար պայմաններ ապահովելու համար: Բոլոր փախստականները պէտք է ունենան հաւասար կարգավիճակ, հաւասար իրաւունքներ եւ ենթարկուեն անցումային շրջանի ընդհանուր կանոններին մինչ հանրաքուէն, որը կը հաստատի Լեռնային Ղարաբաղի վերջնական քաղաքական կարգավիճակը, որի արդիւնքը իրաւաբանօրէն կը ճանաչւի բոլոր պետութիւնների կողմից:*

*Հինգերորդ՝ պէտք է լիովին բացառւի Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետութեան քաղաքացիների՝ հակամարտութեան ողջ ընթացքի հետ կապուած ցանկացած մեղադրանքով քրէական հետապնդման հնարաւորութիւնը: Բոլոր ձերբակալուած եւ արդէն դատապարտուած հայերը պէտք է անյապաղ ազատ արձակուեն: Մենք պատրաստ ենք ճանաչել միջազգային տրիբունալի իրաւասութիւնը՝ հետաքննելու իւրաքանչիւր ռազմական յանցագործութիւն, որոնցով մեղադրւում են մեր քաղաքացիները, սակայն պայմանով, որ այդ տրիբունալը նոյնկերպ կը քննի բոլոր ռազմական յանցագործութիւնները, որոնք կատարուել են Ադրբեջանի քաղաքացիների եւ նրա վարձկանների կողմից:*

*Մենք պատրաստ ենք ըստ ամենայնի նպաստել հակամարտութեան խաղաղ լուծմանը, որը հիմնուած կը լինի ինքնորոշման իրաւունքի եւ ժողովուրդների ու մարդու՝ միջազգայնօրէն ճանաչուած այլ իրաւունքների ու ազատութիւնների լիակատար յարգման վրայ»:*

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այսու տեղեկացնում ենք, որ
Հ. Մ. «Սիփան» միութեան վարչութիւնը
հաշուի առնելով
արցախահայութեան առաջին անհրաժեշտութեան
կարիքներն այս ցուրտ օրերին,
որոշել է
միութեանս 60-ամեակի յոբելենական ձեռնարկը
կազմակերպել ներքին կարգով, եւ
նախատեսուած գումարի մի մասը նուիրել
տեղահանուած մեր քոյրերի եւ եղբայրների համար
վառարանների գնման:
Հ. Մ. «ՍԻՓԱՆ» ՄԻՈՒԹԻՒՆ

Computer AGMA
Համակարգչային ընկերութիւն
خرید و فروش کامپیوتر
ارتقاء سیستم
سرویس در محل
سخت افزار
نرم افزار
شبکه
Tel: 88849305 & 88842385
ایرانشهر شمالی، کوچه نوشهر، پلاک ۳۲، واحد ٦

ԱԼԻՔ Օրաթերթ
Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԷՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ – ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994
E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Օժանդակելու համար օրաթերթիս՝
կարող էք ձեր հին թղթերը յանձնել
«Ալիք» օրաթերթին՝
առաւօտեան ժամը 8-ից
մինչեւ ժամը 20:00-ը
(Մեծ քանակութեան պարագայում՝
նախապէս համաձայնելու խնդրանօք)՝
հետեւեալ հասցէով.
Հիւսիսային Սոհրեւարդի պող.,
Մոհեբի փողոց, համար 16
Հեռ.՝ 88761154
«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
ԼՈՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՈՒԱՑՈՂ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան










## «Անվտանգային....

(Շար. 2-րդ էջից)

ձեռնտու չէ, բոլոր ճակատներում, սկսած Կովկասից ու Ուկրաինայից, վերջացրած Գազայով:

«Թէեւ ռուսական ծրագրին դէմ են արտայայտուել եւրոպական երկրները: Այնուամենայնիւ, Ռուսաստանը միջազգային մակարդակով դեռեւս ունի զգալի կարողութիւններ, որոնք կարող է օգտագործել: Ռուսաստանը եւս դէմ գնաց Գազայի վերաբերեալ ամերիկեան միակողմանի բանաձեւի ընդունմանը: Ամերիկացիները փորձ արեցին ՀԱՄԱՍ-ը եւ դիմադրութեան միւս խմբերին ներկայացնել որպէս ահաբեկչական խմբաւորումներ», -նշում է փորձագէտը եւ ակնարկում, որ դրանով Պաղեստինի հարցը դառնալու էր Իսրայէլի ներքին գործը: «Հետեւաբար, Գազայի հարցը կարեւոր տարածաշրջանային խնդիրներից մէկն է, եւ դրա կողքին ուկրաինական պատերազմը եւս միջազգային մակարդակի կարեւոր խնդիրներից է: Իրանը նախկինում էլ էր յայտարարել հանգուցալուծման նպատակով միջնորդելու իր պատրաստակամութեան մասին, որը ակնկալում է դիտարկել երկու կողմերի միջեւ բանակցութիւններում»,- կարեւորելով Իրանի հնարաւորութիւնները նշել է փորձագէտը:

«Հիւսիս-հարաւ» միջանցքի՝ Բաքւի տարբերակի շուրջ հարցին, որի համաձայն նախագիծն աւարտելու կամքի բացակայութիւնը նկատելի է, փորձագէտը նշել է, որ այն հիմնականում այնքան էլ Բաքւի սրտով չէ: «Հիւսիս-հարաւ միջանցքն աւարտին հասցնելու համար մնացել է երթուղու մի փոքր մասը՝ Անզալիից Աստարա: Ռուսները յայտարարել են, որ պատրաստ են ներդրումներ կատարել այս նախագիծն աւարտին հասցնելու եւ Իրանի հետ համագործակցութեամբ գործն առաջ մղել: Սակայն պէտք է հաշուի առնել Կովկասի քաղաքական խնդիրները: Օրինակ՝ Ադրբեջանի Հանրապետութիւնն անցած տարիներին ցոյց է տուել, որ այդքան էլ պատրաստ չէ ակտիւացնել այդ միջանցքը: Թէեւ երթուղու այս հատուածի կառուցման նախնական պայմանագիրը կնքուել է հէնց Ադրբեջանի Հանրապետութեան հետ, սակայն այս երկիրը տարիներ շարունակ ձգձգում է եւ հաւատարիմ չէ Իրանի հետ կնքած պայմանագրին», - նշել է դոկտ. Բահմանը:

«Ոմանք կարծում են, որ Ղարաբաղի հարցում Ալիեւն իր քայլերն անում է Պուտինի հետ համաձայնեցուած: Եթէ այդպէս է, ապա ինչպիսին պէտք է լինի Իրանի դիրքորոշումը» հարցին պատասխանելով դոկտ. Բահմանը նշել է, որ Կովկասում տեղի ունեցող զարգացումները շատ բարդ եւ բազմաշերտ են, որոնցում ո՛չ Իրանը, ո՛չ Ռուսաստանը հիմնական միակ խաղացողները չեն: « Վերջին երեք տարիներին մենք տեսանք, որ այլ դերակատարներ են մուտք գործել տարածաշրջան եւ մեծացրել են Արեւմուտքի ազդեցութեան գօտին: Բրիտանացիները ներկայ են կուլիսներում, իսկ բեմում դեր են ստանձնել Թուրքիան ու Իսրայէլը: Այդ ներկայութիւնը լիովին տեսանելի է եւ շօշափելի: Սխալ կը լինի ենթադրել, որ միայն Ռուսաստանի նման երկրի քաղաքականութիւնն է պատճառ դարձել, որ Կովկասում զարգացումները նման ընթացք ստանան: Չնայած Ռուսաստանը միշտ եղել է որոշիչ դերակատար, եւ նրա քաղաքականութիւնը Կովկասի հարցում կայունութիւն էր թելադրում»:

«Սա նշանակո՞ւմ է, որ Ռուսաստանի ռազմավարութիւնը փոփոխութիւն չի կրել» հարցին Շոէյբ Բահմանը պատասխանել է. «Չի փոխուել: Ռուսներին դեռ հետաքրքրում է Կովկասը: Յատկապէս, ուկրաինական պատերազմից յետոյ աւելի մեծ դերակատարութիւն են ստանձնելու: Պատճառը պարզ է. Ռուսաստանի մուտքի ուղիները դէպի Արեւմուտք արգելափակւեցին: Այժմ Ռուսաստանը փոխել է իր հիմնական տնտեսական գործընկերներին՝ արեւմտեան երկրներից դէպի արեւելեան եւ ասիական գործընկերութիւններ»:

Ռուսաստանը մնում է շահագրգռուած Կովկասով եւ ցանկանում է իրականացնել միջանցքների իր տարբերակն ու նախագծերը շեշտել է փորձագէտը եւ յաւելել, որ Մոսկուան յայտարարել է «Հիւսիս-հարաւ»-ն աւարտին հասցնելու համար ներդրումներ կատարելու եւ տեխնիկական սարքաւորումներ փոխանցելու պատրաստակամութեան մասին: Իրանի եւ Ռուսաստանի միջեւ ստորագրուել են պայմանագրեր: Սակայն առայժմ տարածաշրջանային խնդիրները մեր առջեւ դնում են Կասպից ծովի օգտագործումը որպէս լաւագոյն լուծում:

## Ներսփիւռքեան....

(Շար. 1-ին էջից)

Սփիւռքի զարգացմանը:

Համընդհանուր Սփիւռք ասելով, փորձենք նկատի առնել աշխարհի ցանկացած վայրում ապրող հային, ներառեալ Հայաստանի Հանրապետութիւնում բնակւող քաղաքացուն, որովհետեւ հայութեան գերակշռող մեծամասնութիւնը տուժողն են Ցեղասպանութեան կոտորածների, էթնիկ զտումների, տեղահանութեան, բնաջնջման վտանգի, հետեւաբար, դիտարկելով աշխարհի հայութեանը, որոնք հայրենազրկւել են, եւ զոհ են դարձել վերոնշեալ դաժանութիւնների, հետեւաբար մենք բոլորս՝ հայութիւնը խոշոր իմաստով՝ կարող ենք դիտարկւել սփիւռքահայեր կամ ապագայ հնարաւոր սփիւռքահայեր:

Եւ հէնց սփիւռքահայի սահմանումն է, որը այսօր աւելի ընդգրկուն պատկերացում է կարող փոխանցել ժամանակակից հայ մարդու ինքնութեանը՝ հետաքրքրութիւնների, ցանկութիւնների եւ տեսլականի առնչութեամբ:

Հարկաւոր է ընդգծել, որ ժամանակակից աշխարհը մարդուն տալիս է ֆենոմենալ մի հնարաւորութիւն՝ հոգեւոր եւ համընդհանուր սփիւռքահայի վերակերտման, որը կը խթանի ազգային ինքնութեան պահպանումն ու ամրապնդումը: Նոյն՝ Արեւմտեան Հայաստանի, Արցախ հայրենիքի, Հայաստանի եւ աշխարհի տարբեր կէտերում ապրող հայի ինքնութիւնը, առիթ տալով վերաիմաստաւորել ֆիզիկական Սփիւռքը, վերակերտել, վերաշինել, եւ ապահովել արդիականացման համար նախապայմանները հէնց այդ ճանապարհով:

Որովհետեւ ինչպէս բոլորս էլ գիտենք, Սփիւռքը այսօր չունի բաւարար չափով ռեսուրսներ վերականգնելու իր մաշւած ֆասադը, ներառեալ սփիւռքեան ամենատարբեր կառոյցները, դպրոցներ, ակումբներ, հոգեւոր եւ մշակութային կենտրոնները:

Սակայն, դրականն այն է, որ թւայնացման ժամանակաշրջանի ամենահասանելի հնարաւորութիւններից մէկն է թւային տարածքներում վերախմբաւորւել, փոխազդեցութեան եւ մոբիլիզացիայի նոր հնարաւորութիւններ ստեղծել, ձեւաւորելով համատեղ նոր համայնքներ, որոնք կարող են համալրել եղած ֆիզիկական համայնքների մարդկային ռեսուրսները:

Համընդհանուր թւային, հայկական Սփիւռքի արդիւնաւէտ գործնականացման համար, այնուամենայնիւ, հարցերը դեռեւս բազում են, արդեօք այն եղած եւ ֆիզիկական Սփիւռքի ընդլայնման արդիւնքն է, թէ՞ զուգահեռ իրականութեան պատկերն է: Կարո՞ղ է նոր Սփիւռքի ձեւաւորման պատճառ դառնալ, թէ՞ գլոբալիզացիայի արձագանգն է՝ հասարակութեան նոր մոդելների ձեւաւորման, որն ինքնին նաեւ ծաւալող Սփիւռք է: Կարո՞ղ է արդեօք բացայայտել Սփիւռքի նոր գործառոյթները, կամ իրական ազդեցութիւն ունենալ Հայաստանի վերականգման գործում, թէ՞ տասնամեակներ եղած փորձի նման նաեւ կարող է ստեղծել աղօտ պատկերացումներ Սփիւռքի գործառոյթի եւ արդիւնաւէտութեան նկատմամբ, ոչ բաղձալի արդիւնաւէտութիւն, որի ականատեսը եղանք պատերազմի օրերին:

Յիշենք, որ նոյն պատերազմից յետոյ ակտիւացած համացանցային տարբեր խմբերը յաճախ ներառում էին աշխարհի բազում կէտերում ապրող հայերին, որը վկայում է, թէ թւային Սփիւռքը ցրւած եւ ոչ ամբողջական համախմբում է, եւ որի գոյութիւնը հիմնւած է ընդհանուր ուղղութեան մշակման կամ ձեւաւորման վրայ:

Ընդհանուր մի ուղղութիւն, որի հիմքը Հայաստանն է, որի ազգային նպատակները, ազգային մշակումները եւ նարատիւները ներքին համախմբման կարեւոր գործօն են, որը մշտապէս նաեւ կարող է վերաձեւաւորւել, երբ հաւաքականութիւնը զարգացման միտում է արձանագրում, որովհետեւ այն նաեւ անկայուն հաւաքականութիւն է, քանի որ իմաստաւորւում է իւրաքանչիւր անդամի ընդլայնմամբ, վերաինքնորոշւում է, քանի որ աճում կամ նւազում է ոչ միայն նոր անդամների ընդգրկմամբ, այլեւ՝ տարբեր էթնոմշակութային վայրերում ապրող հայերի զրաւմամբ/բացառմամբ, եւ անհատների կամաւոր գործընթացի միջոցով՝ այն որոշմամբ, որ ցանկանում են միանալ կամ լքել կոլեկտիւը:

Այս ամէնը փաստում է, որ իրականում բարդ է գտնել թւային եւ կոլեկտիւ Սփիւռքի ընդհանուր ընդունւած ամբողջական սահմանումը, թէեւ այս հայեցակարգի շուրջ քննարկումները միջազգային տարբեր հարթակներում ընդհանում են, սակայն դեռեւս ոչ բոլոր հարցերի պատասխաններն են միանշանակ, նոյնիսկ միջազգային տարբեր հարթակներում եղած երկար տարիների աշխատանքներից յետոյ:


Երկու տարբեր թռիչքներ դէպի՝ Հայաստան
ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ
IRAN AIRTOUR AIRLINES
Qeshm Air
برای تهیه بلیط می توانید با
شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی
۰۲۱-۸۸۵۴۱۲۴۲-۵ و ۸۸۵۴۱۲۹۸-۹ agency@sati-co.com
و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «ناربه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹
و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.
«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
آژانس مسافرتی «بازه»
BAZE TOUR & TRAVEL AGENCY
Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան
Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824
نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان - ارمنستان تلفن: ۸۲۴ ۲۲ ۱۰۲ ۳۷۴+ , ۳۰۵ ۷۵ ۹۶۵ ۳۷۴+
Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am

ՔԱՐԻՍՄԻ
Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ
خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی،
مبلمان، خرده ریز و لوازم آنتیک
Հեռ.՝ 88594063 եւ 09 12 11932 12

«Արարատ»
Ամէն տեսակ տնային իրերի գնորդ
سماور ذغالی، نقره جات، ظروف مسی،
چراغ لاله و لوستر،
رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ،
لوازم چوبی آنتیک و خرده
Հեռ.՝ 88523388

SET Coffee
فروشگاه: هفت تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰
کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار ماگنولیا، پلاک ۸۱۱۷
0936-6726563
021-88305827
www.set-coffee.com
قهوه سِت

املاک هنرمندان
● بزرگترین آژانس مسکن مرکز شهر تهران (منطقه ۶)
● خانه های قدیمی تخصص ماست
آدرس: میدان هفت تیر، کریمخان، خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک۴
تلفن: ۸۸۸۴۵۵۶۶ - ۸۸۸۴۵۵۷۷
واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰
مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴
مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی


Նասեր Քանանի.

# «ԱՄՆ-ը, Անգլիան եւ Կանադան պէտք է պատասխանատուութեան ենթարկւեն որպէս սիոնիստների ոճրագործութեան գործընկերներ»

«ԱԼԻՔ» - Իրանի արտաքին գործերի նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Նասեր Քանանին արձագանգելով ԱՄՆ-ի, Բրիտանիայի եւ Կանադայի կառավարութիւնների անհիմն ու միջամտող քայլերին, Իրանի որոշ քաղաքացիների դէմ պատժամիջոցներ կիրառելու հարցում, խստօրէն դատապարտել է դրանք:



ԻՄՆԱ-ի համաձայն՝ նա նշել է. «Այն երկրները, որոնք գաղութատիրութեան եւ մարդու իրաւունքների համակարգւած խախտումների սեւ անցեալ ունեն, նաեւ իրենց տարածքներում եւ աշխարհի զանազան վայրերում փոքրամասնութիւնների, իմիգրանտների եւ տեղացիների իրաւունքների բացայայտ խախտում են կատարում, նման միտումնաւոր եւ ցուցադրական գործողութիւններով, ձգտում են շեղել աշխարհի հասարակական կարծիքը անմարդկային քայլերից եւ այն հանգամանքից, որ իրենք լիարժէք ձեւով համագործակցում են՝ սիոնիստական մանկասպան ռեժիմի անմարդկային ոճրագործութիւններին»:

Նասեր Քանանին ընդգծելով, որ Իրանի Իսլամական Հանրապետութեան իրաւունքն է փոխադարձ եւ համաչափ քայլեր ձեռնարկել՝ շեշտելով. «Նկատի առնելով Իսրայէլի ռեժիմի նկատմամբ ԱՄՆ-ի, Բրիտանիայի ու Կանադայի կառավարութիւնների յարատեւ ու պատմական աջակցութիւնները, եւ Գազայում այս ռեժիմի վերջին երկու ամիսների պատերազմական ոճրագործութիւնների նկատմամբ քաղաքական, ռազմական, հետախուզական ու մեդիա բացայայտ աջակցութիւնը, նրանք պէտք է պատասխան տան, որպէս ոճրագործութեան ու յանցագործութեան մեղսակիցներ»:

Յականշական է, որ ԱՄՆ-ի Ֆինանսների նախարարութեան արտաքին ակտիւների վերահսկման գրասենեակը վերջերս մի յայտարարութեամբ նշել է, որ այս երկիրը համայն աշխարհում, ներառեալ Իրանում, Աֆղանստանում եւ Չինաստանում պատժամիջոցներ է սահմանել մի շարք անձանց նկատմամբ, այն պատրւակով, որ նրանք մասնակից են եղել մարդու իրաւունքների խախտումների գծով:

## Արցախի....

(Շար. 1-ին էջից)

Այո, Արցախի հրէշաւոր յանձնումը չէր սոյն խմբաւորման նպատակը: Արցախի յանձնումն ընդամէնը միջոց է սկսելու բուն նպատակի իրագործումը՝ ՀՀ-ի թուրքացումը: Դա է՝ ՌԴ-ի դուրսմղումը, ադրբեջանցիների վերադարձը ՀՀ, թուրքական կապիտալի ներհոսքը, ՀՀ տարածքը թուրք-ադրբեջանական պլացդարմի վերածելն ու երկրի վերջնական միլլէթացումը բարեյաջող աւարտին հասցնելը:

Դրան հասնելու համար այժմ պէտք է նախապատրաստել հայ հասարակութեանը, առայժմ կուշտ կերակրել լաւ կեանքի սպասելիքով, համոզել, յաղթել մօտակայ արտահերթ ընտրութիւններին եւ... լայն թափով սկսել ՀՀ-ի միլլէթացումը:

Հէնց դրա համար են Էրդողանն ու Ալիեւը ատամներով պահում ՀՀ-ում իշխող քաղաքականապէս թուրքական խմբակին եւ սարսափազդու կոչեր հնչեցնում վերջիններիս դէմ ելած ընդդիմադիրների հասցէին. նրանք սարսափում են, որ կարող է կորցնեն ՀՀ-ի նւաճման բանալիներին:

Այստեղ, թերեւս մի տեղ Նիկոլ Փաշինեանը անկախ իրենից կարող է հակադրւել, հակառակն ապացուցել 1997-ի յայտնի յօդւածի հեղինակին, ինչի համար միգուցէ ներեն իրեն: Ահա այդ դրւագը.

«Դժւար է հաւատալ, որ անգամ խելակորուստի մտքով կանցնէր, թէ Ղարաբաղը ծախելով, որեւէ մէկը Հայաստանում կարող է իշխանութիւն պահել»:

**ՎԱՀԷ ՍԱՐԳՍԵԱՆ**
**Yerkir.am կայքի խմբագիր, պատմաբան**

# Բանակը շուտով կը ներկայացնի իր նոր ԱԹՍ-ն

«ԱԼԻՔ» - Բանակը շուտով կը ներկայացնի իր նոր անօդաչու թռչող սարքը (ԱԹՍ): Այս մասին տեղեկացրել է բանակի հակաօդային պաշտպանութեան (ՀՕՊ) ուժերի համակարգող տեղակալ գեներալ-մայոր Մոհամմադ Իւսէֆի Խոշ Ղալբը:

«Բանակի ԱԹՍ-ների վերջին զօրավարժութիւններում աւարտին հասցրեցինք «Ռասուլ» նախագիծը («Մաջիդ» հրթիռով զինւած «Քարար» ԱԹՍ-ն), եւ յայտարարեցինք, որ այս ճանապարհը շարունակւելու է»,- ասել է ՀՕՊ ուժերի համակարգող տեղակալը՝ յաւելելով. «Մեր ԱԹՍ-ների հնարաւորութիւնները տարբեր են: Մենք ունենք մարտավարական ԱԹՍ-ներ, մարտական աջակցութեան եւ մարտական գործողութիւնների ԱԹՍ-ներ, եւ մօտ ապագայում մենք կօգտագործենք ԱԹՍ՝ նոր առաքելութեամբ, որը շուտով կը ներկայացւի»:

Նշելով, որ Իրանի ԱԹՍ-ների հնարաւորութիւնները բարելաւելու են, գեներալ Իւսէֆի Խոշ Ղալբն ասել է. «մենք կը ներկայացնենք նոր ԱԹՍ-ներ թէ՛ մարտավարական, թէ՛ օպերատիւ, թէ՛ ռազմավարական ոլորտներում, ինչպէս նաեւ՝ յատուկ տեսակի առաքելութեամբ»:



